ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N3165 - Ա **23 ապրիլի 2009թ.**

ՏԻՉԻՆԱՅԻ ՓՈՂՈՑԻ Հ. 107 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԹԱՄԱՐԱ ԽՈՐԵՆԻ ՓԱՆՈՍՅԱՆԻ, ԱԻԴԱ ԽՈՐԵՆԻ ՓԱՆՈՍՅԱՆԻ, ՏԱՏՅԱՆԱ ԽՈՐԵՆԻ ՓԱՆՈՒՍՅԱՆԻ, ՎԼԱԴԻՄԻՐ ԽՈՐԵՆԻ ՓԱՆՈՒՍՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Թամարա Խորենի Փանոսյանի (ծնված 29.05.1958թ.), Աիդա Խորենի Փանոսյանի (ծնված 25.10.1960թ.), Տատյանա Խորենի Փանուսյանի (ծնված 26.12.1951թ.), Վլադիմիր Խորենի Փանուսյանի (ծնված 25.09.1953թ.) դիմումը: Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Տիչինայի փողոցի հ.107 հասցեում ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 733.1քմ, որից 673.2քմ մակերեսով հողամասը Թամարա Խորենի Փանոսյանին, Աիդա Խորենի Փանոսյանին, Տատյանա Խորենի Փանուսյանին, Վլադիմիր Խորենի Փանուսյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասն է (680քմ մակերեսով հողամասից օգտագործվում է 673.2քմ մակերեսով հողամասը): Օրինական հողամասին կից օգտագործվող 59.9քմ մակերեսով հողամասը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականը, 02.09 .2008թ. ժառանգության իրավունքի վկայագիրը, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շենգավիթ տարածքային ստորաբաժանման 30.09.2008թ. հ.2143, Երևանի քաղաքապետարանի <<Հողի ունեցվածքի գործառնություններ>> ՊՓԲԸ-ի 16.04.2009թ. հ.20/2-Ե-250 գրությունները, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 14.04.2009թ. հ.20-Ել-3259 եզրակացությունը, համաձայն որի Տիչինայի փողոցի հ.107 բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով <<Երևան քաղաքում իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին>> հ.2387-Ն որոշմամբ.

1. Վերականգնել Տիչինայի փողոցի հ.107 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Թամարա Խորենի Փանոսյանի, Աիդա Խորենի Փանոսյանի, Տատյանա Խորենի Փանուսյանի, Վլադիմիր Խորենի Փանուսյանի հողօգտագործման իրավունքը բնակելի տան

զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 673.2քմ մակերեսով հողամասին կից 59.9քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 59.9քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ։

2. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շենգավիթ տարածքային ստորաբաժանման կողմից։

3. Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված միասնական գլխավոր հատակագծով։

4. Տիչինայի փողոցի հ.107 հասցեի բնակելի տանը տրամադրել հասցե՝ <<Տիչինայի փողոցի հ.107 տուն>>։

5. Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Շենգավիթ տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Թամարա Խորենի Փանոսյանի, Աիդա Խորենի Փանոսյանի, Տատյանա Խորենի Փանուսյանի, Վլադիմիր Խորենի Փանուսյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ լուծելով գույքագրման արդյունքում հաշվառված անշարժ գույքի խնդիրները։

6. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետին՝ սույն որոշման օրինակները 5-օրյա ժամկետում առաքել Մալաթիա-Սեբաստիա թաղապետարան։

7. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա։

8. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Սարգսյանի վրա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ